

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԵՎ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ԿՐԻՏԻԿԱԿԱՆ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայիս, 2024




Ներկայացվում է «Ադոբե Դիվելոպմենթ Արև» ՍՊԸ
անձնակազմին

 +374 10 700 800

 info@efes.am





Ի՞նչն է ՀԱՏՈՒՑՎՈՒՄ

- ❑ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐԻ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ (ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՀ
- ❑ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ (11 ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)
- ❑ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՄՇՏԱԿԱՆ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ



ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐԻ ԿԱՍ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ (ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՀ



Ի՞նչ է հատուցվում

Ապահովագրված անձի մահվան դեպքում նրա ժառանգներին տրամադրվում է հատուցում ապահովագրական գումարի 100%-ի չափով:



Ո՞րն է ապահովագրական պատահարը

Մահ հետևյալ պատճառներով՝

- ☐ Դժբախտ պատահարի հետևանքով մահ
- ☐ Բնական պատճառների (հիվանդությունների) հետևանքով, բացառությամբ հղիության և ծննդաբերության բարդությունների, առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների:



Դժբախտ պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, որոնց հետևանքով Ապահովագրված անձի կամքից անկախ վրա է հասնում նրա մահը:



Ապահովագրված անձի մահվան դեպքում ո՞վ է հանդիսանում է ժառանգ

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ անձի մահից հետո 6 ամիս հետո տրվում է ժառանգության իրավունքի վկայական, որում նշվում են բոլոր ժառանգները (յուրաքանչյուրն իր իրավունքով, համամասնությամբ և ժառանգության կարգով): Տվյալ պատահարով հատուցման ստանալու իրավունք ունեն միայն ժառանգները ժառանգության վկայականի ներկայացումից հետո: Կտակի առկայության դեպքում հիմք է ընդունվում կտակը:





Ապահովագրական հատուցում տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ

- Հատուցման դիմում, որը կարող է ներկայացվել ապահովագրական պատահարից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում
- ապահովագրական հատուցում ստացող անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի բնօրինակը,
- Ապահովագրված անձի մահը հաստատող վկայականը,
- Ապահովագրված անձի անձնագրի պատճենը,
- Դժբախտ պատահարի դեպքում՝ ոստիկանության կամ այլ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթ, որոնց իրավասության շրջանակներում է գտնվում տվյալ դժբախտ պատահարի հանգամանքների քննումը և հաստատումը,
- Հիվանդության դեպքում՝ հիվանդության պատմագրի և/կամ ամբուլատոր քարտի, ինչպես նաև բժշկական եզրակացության կամ բժշկական այլ փաստաթղթի օրինակը
- ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայականի պատճենը՝ տրված և վավերացված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կրիտիկական հիվանդություններ

Ի՞նչ է հատուցվում

Ապահովագրված անձի մոտ նշված կրիտիկական հիվանդություններից որևէ մեկի ախտորոշման դեպքում տրամադրվում է հատուցում ապահովագրական գումարի 100%-ի չափով:



Կրիտիկական հիվանդությունների ցանկը

- Քաղցկեղ
- Աորտայի հիվանդությունների վիրաբուժական բուժում
- Կուրություն (տեսողության կորուստ)
- Կորոնար շունտավորում
- Միոկարդի ինֆարկտ
- Սրտի փականների փոխպատվաստում
- Երիկամային անբավարարություն
- Կենսականորեն կարևոր օրգանների տրանսպլանտացիա
- Ցրված սկլերոզ
- Պարես կամ պլեգիա
- Ինսուլտ

Կրիտիկական հիվանդություններ

Հատուցումը վճարվում է, եթե՝

- Ախտանիշները կամ վիճակն առաջին անգամ ի հայտ են եկել կամ առաջին անգամ ախտորոշվել են տվյալ անձի համար առաջին անգամ կնքված ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելուց **90 օր հետո (սպասման ժամկետ)**:
- Ապահովագրված անձը ապրում է կրիտիկական հիվանդության ախտորոշումից հետո առնվազն **30 օր (ապրելու ժամկետ)**:





Ապահովագրական հատուցում տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ

- Հատուցման դիմում,
- Ապահովագրական հատուցում ստացող անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի բնօրինակը,
- Ապահովագրված անձի անձնագրի պատճենը,
- Յուրաքանչյուր կրիտիկական հիվանդության գծով ապահովագրության պայմանագրում նշված բժշկական փաստաթղթերը





Դժբախտ պատահարի հետևանքով մշտական լրիվ կամ մասնակի անաշխատունակություն



Ի՞նչ է հատուցվում

Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձին լուրջ մարմնական վնասվածք հասցնելու դեպքում վճարվում է ապահովագրական գումարի **որոշակի տոկոսը** (պատահարների բնույթը և հատուցման գումարը ֆիքսվում են ապահովագրության պայմանագրով):





Դժբախտ պատահարի հետևանքով մշտական լրիվ կամ մասնակի անաշխատունակություն

Հատուցումների աղուսյակ

Վնասվածքի բնույթ	Հատուցման % ապահովագրական գումարից
Աջ ձեռքի բութ մատի ամբողջական կորուստ	20%
Ձախ ձեռքի բութ մատի ամբողջական կորուստ	15%
Աջ ձեռքի բութ մատի մասնակի կորուստ	10%
Ձախ ձեռքի բութ մատի մասնակի կորուստ	5%
Ոտնաթաթի բթամատի անկիլոզ	10%
Ոտնաթաթի երկու մատների անկիլոզ	5%
Ոտնաթաթի երկու մատների անդամահատում	3%


Ներկայացված են որոշ օրինակներ: Ամբողջական ցանկը ներկայացված է ապահովագրության պայմանագրում:



Ապահովագրական հատուցում տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ

- Հատուցման դիմում, որը կարող է ներկայացվել ապահովագրական պատահարից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում
- ապահովագրական հատուցում ստացող անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի օրինակը,
- Ապահովագրված անձի անձնագրի պատճենը,
- Ոստիկանության կամ այլ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթ, որոնց իրավասության շրջանակներում է գտնվում տվյալ դժբախտ պատահարի հանգամանքների քննումը և հաստատումը,
- Հիվանդության պատմագրի և/կամ ամբուլատոր քարտի, ինչպես նաև բժշկական եզրակացության կամ բժշկական այլ փաստաթղթի օրինակը:





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

📍 Հասցե: Նշ, 0033, ք. Երևան, Հրաչյա Քոչար 35/1

☎ Հեռ.՝ **+374 10 700 800**

✉ Էլ. Խաղե: info@efes.am

🌐 www.efes.am

